Հավելված
Երևանի քաղաքապետի
19.07.2017թ. N 2485-Ա որոշման

/Հավելված 2
Երևանի քաղաքապետի
12.05. 2017 թ. N 1553-Ա որոշման/

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N -ԱԳ
ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԳՐԱՎԻ N 133/2-ԱԳ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 2017 թվականի _____

Հայաստանի Հանրապետության Երևանի համայնքը (այսուհետև՝ Վաճառող), ի դեմս Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի, ում անունից՝ համաձայն Երևանի քաղաքապետի 2017 թվականի _____ -ի N ___-Ա որոշման հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը, մի կողմից, և «Սահակյանշին» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Գնորդ), ի դեմս ընկերության տնօրեն Սուրեն Սահակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (Վաճառողին և Գնորդին միասին հիշատակելիս այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի նիստի N 15 արձանագրության 39-րդ կետի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Վաճառողի և Գնորդի միջև 2012 թվականին կնքված առուվաճառքի և գրավի N 133/2-ԱԳ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր, վավերացվել է նոտարի կողմից 2012 թվականի հուլիսի 26-ին, գրանցվել է սեղանամատյանում N 4551 համարի տակ, առուվաճառքի և գրավի N 133/2-ԱԳ պայմանագրում 2013 թվականի հոկտեմբերի 23-ին Կողմերի միջև կնքվել է Հ. 228/2-ԱԳ համաձայնագիրը՝ հողամասի տարաժամկետ վճարմամբ առուվաճառքի հ. 133/2-ԱԳ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, որը վավերացվել է նոտարի կողմից 2013 թվականի նոյեմբերի 6-ին, գրանցվել է սեղանամատյանում N 5233 համարի տակ) Կողմերն որոշեցին կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պայմանագրի 3-րդ կետի 3.1.1 ենթակետում «վճարումները ամբողջությամբ կատարելուց հետո» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի օգոստոսի 1-ը» բառերով.

2) Պայմանագրի 5.4-րդ կետի 5.4.4-րդ ենթակետում «5-10 տարի» բառերը փոխարինել «15-20 տարի » բառերով.

3) Պայմանագրի 5.4-րդ կետի 5.4.5-րդ ենթակետում «Անշարժ գույքի վճարումներն ամբողջությամբ կատարելուց հետո եռամսյա ժամկետում» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի օգոստոսի 1-ը» բառերով.

2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի յուրաքանչյուր կողմին, նոտարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին տրվում է մեկական օրինակ:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար **Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**